

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

7 փետրվարի 2008 թվականի N 134-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ (ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) ԴԻՄՈՒՄԻ
ՀԵՏ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ,
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ, ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն "Օտարերկրացիների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ
և 17-րդ հոդվածների 2-րդ մասերի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության
կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ
ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության
կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի քննարկման
կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի
Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը՝ համաձայն N 3
հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2008 թվականի փետրվարի 7-ի
N 134-Ն որոշման

ՑԱՆԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ (ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) ԴԻՄՈՒՄԻ
ՀԵՏ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1. Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) համար օտարերկրացիները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն (այսուհետ՝ անձնագրային եւ վիզաների վարչություն) ներկայացնում են՝

1) դիմում.

2) 35 x 45 մմ չափսի երեք գունավոր լուսանկար.

3) անձնագիրը, անձնագրի պատճենը եւ անձնագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.

4) Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր.

5) առողջական վիճակի մասին տեղեկանք.

6) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

2. Անձնագրային եւ վիզաների վարչությունում կացության կարգավիճակ ստանալու համար դիմող օտարերկրացիները Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը ներկայացնելիս լրացնում է դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձեւի, որում նշվում են՝

1) տրամադրվող (երկարաձգվող) կացության կարգավիճակի տեսակը.

2) ազգանունը, անունը, հայրանունը.

3) քաղաքացիությունը.

4) ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

5) ծննդյան վայրը.

6) ազգությունը.

7) այցելության նպատակը եւ զբաղմունքը.

8) ընտանեկան դրությունը.

9) 16 տարին չլրացած երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը եւ քաղաքացիությունը.

10) Հայաստանի Հանրապետությունում եւ արտասահմանում բնակության հասցեները.

11) անձնագրի սերիան եւ համարը, երբ եւ ում կողմից է տրվել.

12) նշում՝ օտարերկրացու կողմից կացության կարգավիճակ ստանալուց հետո 15-օրյա ժամկետում, իսկ մշտական բնակության վայրի փոփոխման դեպքում՝ 7-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան տեղական ռեզիստրին հայտնելու պարտականության վերաբերյալ տեղեկացված լինելու մասին.

13) դիմում-հարցաթերթիկը լրացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) օտարերկրացու ստորագրությունը.

15) դիմում-հարցաթերթիկի աջ անկյունում փակցվում է 35 x 45 մմ չափսի լուսանկար:

Ձեւ

ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
APPLICATION-QUESTIONNAIR

| լուսանկար |
| foto |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ (ԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) (ընդգծել)
FOR RECEIVING RESIDENCY STATUS (FOR EXTENDING THE TERM OF RESIDENCY STATUS)
IN THE REPUBLIC OF ARMENIA

1. Ազգանունը, անունը, հայրանունը _____
Name, Surname, mild name

2. Քաղաքացիությունը _____ 3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը _____
Citizenship Date of birth

4. Ծննդյան վայրը _____
Place of birth

5. Ազգությունը _____
Nationality

6. Այցելության նպատակը եւ զբաղմունքը _____
Purpose of visit

7. Ընտանեկան դրությունը _____
Family status

8. 16 տարին չլրացած երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը,
ամիսը, տարեթիվը եւ քաղաքացիությունը
Children under 16 /name, surname, date of birth/ citizenship

9. Հայաստանի Հանրապետությունում եւ արտասահմանում բնակության հասցեները
Address in the Republic of Armenia and abroad

10. Անձնագրի սերիան եւ համարը, երբ եւ ում կողմից է տրվել _____
Passport number

11. Տեղեկացված եմ կարգավիճակ ստանալուց հետո 15-օրյա ժամկետում, իսկ
Հայաստանի Հանրապետությունում իմ մշտական բնակության վայրի փոփոխման դեպքում
7-օրյա ժամկետում տեղական ռեգիստրին հայտնելու պարտականության մասին:
I am informed about my responsibility to providing any information to the
local register within 15 days after getting the residence card and in case
of changing my permanent residence in the Republic of Armenia in 7 days
term:

_____ 20 թ. Հարցաթերթիկը լրացրեց _____
Filled by (ստորագրությունը,

signature)

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2008 թվականի փետրվարի 7-ի
N 134-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ (ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու եւ կացության կարգավիճակը երկարաձգելու որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը (այսուհետ՝ անձնագրային եւ վիզաների վարչություն)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 134-Ն որոշման N 1 հավելվածում նշված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում: Անձնագրային եւ վիզաների վարչությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու որոշումն ընդունում է "Օտարերկրացիների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ եւ 16-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, իսկ կացության կարգավիճակը երկարաձգելու որոշումը՝ "Օտարերկրացիների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի "ա", "գ" եւ "դ" կետերով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում:

2. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցն անձնագրային եւ վիզաների վարչությունը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ազգային անվտանգության ծառայություն) հետ՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ ազգային անվտանգության ծառայություն ուղարկելով օտարերկրացու անձնագրի եւ դիմում-հարցաթերթիկի պատճենները, իսկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանող օտարերկրացիների դեպքում՝ միայն ցուցակները:

3. Ազգային անվտանգության ծառայությունն օտարերկրացուն կացության կարգավիճակ տալու կամ կացության կարգավիճակը երկարաձգելու հարցի վերաբերյալ 7-օրյա ժամկետում անձնագրային եւ վիզաների վարչություն է ներկայացնում իր համաձայնության կամ առարկության վերաբերյալ տեղեկատվություն:

4. "Օտարերկրացիների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածում նշված կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերից որեւէ մեկի առկայության դեպքում անձնագրային եւ վիզաների վարչության կողմից ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու դիմումները կարող են մերժվել: Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու դիմումը մերժելու մասին անձնագրային եւ վիզաների վարչության որոշումն օտարերկրացին կարող է բողոքարկել դատական կարգով:

5. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու կամ կարգավիճակ տալը մերժելու որոշման կրկնօրինակն անձնագրային եւ վիզաների վարչությունը որոշումն ընդունելուց հետո եռօրյա

Ժամկետում, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 1-ին կետում նշված ժամկետում ուղարկում է կացության կարգավիճակ ստանալու համար դիմած օտարերկրացուն:

6. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներին տրվում է համապատասխանաբար ժամանակավոր կացության կամ մշտական կացության քարտ:

Հավելված N 3
ՀՀ կառավարության
2008 թվականի փետրվարի 7-ի
N 134-Ն որոշման

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ, ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ**

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ
ԵՎ ՁԵՎԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության եւ մշտական կացության քարտերը՝ 80 x 120 մմ չափսի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթղթեր են:

2. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր եւ մշտական կացության քարտի դիմային էջի վերելի ձախ մասում հայերեն մեծատառերով տպագրված են "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ" բառերը: Ստորել՝ ձախ մասում հայերեն եւ անգլերեն մեծատառերով տպագրված են "ԿԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ", "RESIDENCE CARD" բառերը: Դրանից ներքե տեղ է հատկացված օտարերկրացու լուսանկարը փակցնելու համար: Լուսանկարից ներքե նախատեսված է տող՝ քարտն ստացողի ստորագրության համար: Դրանից ներքե տպագրվում է կացության քարտի սերիան եւ համարը: Քարտի աջ կողմի վերելի մասում անգլերենով, մեծատառերով նշված են "REPUBLIC OF ARMENIA" բառերը, որից ներքե նշվում են օտարերկրացու անձնագրի սերիան եւ համարը, ապա՝ հայերենով եւ անգլերենով նշվում են օտարերկրացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, քաղաքացիությունը, կացության կարգավիճակը, քարտը տալու եւ վավերականության, կացության կարգավիճակի երկարաձգման ժամկետները:

3. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության եւ մշտական կացության քարտի հակառակ կողմում առանձին կետերով, հայերենով եւ անգլերենով տպագրված են՝

1) սույն քարտն ստացած օտարերկրացին ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվելու, Հայաստանի Հանրապետություն մուտքի եւ Հայաստանի Հանրապետությունից ելքի իրավունք.

The holder of this card has a right to live in the Republic of Armenia, exit and enter the Republic of Armenia.

2) կացության քարտը կորցնելու դեպքում օտարերկրացին անհապաղ դիմում է քարտը տրամադրած մարմնին.

In case of loss of the residence card should turn immediately to police authorities.

3) կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը ներկայացվում է կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ.

The holder of this card should apply to update authority 30 days before the expiring date.

4) նշումներ.

OBSERVATIONS:

4. Ժամանակավոր եւ մշտական կացության քարտի երկու երեսի կենտրոնում գունավոր պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որը երիզվում է վարդագույն եւ կապտավուն զարդանախշով:

5. Ժամանակավոր եւ մշտական կացության քարտերը պատրաստվում են սերիաներով՝ յուրաքանչյուրը 10.000 տպաքանակով: Սերիաները նշագրվում են լատիներեն մեծատառերով (AA, AB, AC, եւ այլն): Ժամանակավոր կացության եւ մշտական կացության քարտերի համարակալումն սկսվում է 0000001 եւ ավարտվում՝ 0010000 թվանշաններով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՁԵՎԸ

6. Հատուկ կացության կարգավիճակ ստացած օտարերկրացու հատուկ անձնագիրը՝ 88 x 125 մմ չափսի, 12 էջից բաղկացած, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացու հատուկ կացության կարգավիճակը հաստատող հիմնական փաստաթուղթ է:

7. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի շապիկը մուգ կարմիր գույնի է, որի վերելի մասում մեծատառերով տպագրված են "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ" բառերը: Կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որից ներքեւ տպագրված են "ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ" բառերը, ապա՝ անգլերենով, համեմատաբար փոքր տառերով տպագրված են "REPUBLIC OF ARMENIA", "SPECIAL PASSPORT" բառերը:

8. Շապիկի վրա պատկերված Հայաստանի Հանրապետության զինանշանը եւ գրառումները բրոնզագույն են:

9. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի շապիկի հակառակ երեսի կենտրոնում գունավոր պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Էջը վերելից եւ կողքերից երիզված է վարդագույն զարդանախշով:

10. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 1-ին, 4-12-րդ էջերը վերելից եւ կողքերից երիզված են բաց մանուշակագույն զարդանախշերով, էջերի վերելի մասերում պատկերված են կամարաձեւ, իսկ ներքեւի մասերում՝ ձվաձեւ զարդանախշեր: Էջերի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

11. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 1-3-րդ էջերի վերելի մասերում հայերեն եւ անգլերեն մեծատառերով տպագրված են "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ", "REPUBLIC OF ARMENIA" բառերը:

12. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 1-ին էջում զինանշանի պատկերից վերեւ հայերեն եւ անգլերեն մեծատառերով նշված են "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ", "REPUBLIC OF ARMENIA" բառերը, իսկ Հայաստանի Հանրապետության զինանշանից ներքեւ՝ "ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ", "SPECIAL PASSPORT" բառերը: Նույն էջի ներքեւի մասում՝ կենտրոնում նշվում են հատուկ անձնագրի սերիան եւ համարը:

13. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 2-րդ էջում "ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ", "REPUBLIC OF ARMENIA" բառերից ներքեւ հայերենով նշվում են օտարերկրացու ազգանունը, անունը, հայրանունը, քաղաքացիությունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձնագիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը, անձնագիր տրամադրած մարմնի համապատասխան ծածկագիրը, օտարերկրացու սեռը, ծննդավայրը, անձնագրի վավերականության ժամկետը:

14. Էջի ներքեւի մասում տպագրված են "Անձնագրի տիրոջ ստորագրությունը", "SIGNATURE OF HOLDER" բառերը: Նույն էջի աջ մասում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ երիզված շրջանաձևի զարդանախշով:

15. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 3-րդ էջում "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ", "REPUBLIC OF ARMENIA" բառերից հետո նշված հաջորդականությամբ, անգլերենով նշվում են փաստաթղթի անվանումը, տեսակը, երկրի ծածկագիրը, անձնագրի սերիան եւ համարը, օտարերկրացու ազգանունը, անունը, հայրանունը, քաղաքացիությունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձնական համարը, սեռը, ծննդավայրը, հատուկ անձնագիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը, վավերականության ժամկետը, տրամադրող մարմնի ծածկագիրը:

16. Նույն էջի ձախ մասում տեղ է հատկացված անձնագիր ստացող օտարերկրացու՝ 35 x 45 մմ չափսի լուսանկարի համար, իսկ աջ մասերում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ երիզված շրջանաձևի զարդանախշով:

17. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 4-12-րդ էջերը նախատեսված են նշումների համար: Նշված էջերի վերեւի մասերում հայերեն եւ անգլերեն մեծատառերով տպագրված են "ՆՇՈՒՄՆԵՐ", "OBSERVATIONS" բառերը:

18. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի 5-12-րդ էջերի ներքեւի մասերում, դակման միջոցով նշվում են հատուկ անձնագրի սերիան եւ համարը:

19. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի վերջին էջի (շապիկի ներսի կողմում) կենտրոնում հայերեն եւ անգլերեն մեծատառերով տպագրված են "ՀԱՏՈՒԿ ԱՆՉՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է:", "SPECIAL PASSPORT IS THE PROPERTY OF THE REPUBLIC OF ARMENIA.", իսկ ներքեւի մասում՝ "ՀԱՏՈՒԿ ԱՆՉՆԱԳԻՐԸ 12 ԷՋԻՑ Է:" "SPECIAL PASSPORT CONTAINS 12 PAGES."

նախադասությունները:

20. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրերը պատրաստվում են սերիաներով՝ յուրաքանչյուրը 10.000 տպաքանակով: Սերիաները նշագրվում են լատիններեն մեծատառերով (AA, AB, AC եւ այլն): Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրերի համարակալումներն սկսվում են 0000001 եւ ավարտվում 0010000 թվանշաններով:

21. Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի բոլոր էջերը համարակալվում են արաբական թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		REPUBLIC OF ARMENIA
ԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ	Անձնագիր	
RESIDENCE CARD	PASSPORT	
	Անունը _____	
	Name _____	
	Ազգանունը _____	
	Surname _____	
	Հայրանունը _____	
	Mild name _____	
	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	

Date of birth _____	
Քաղաքացիությունը _____	
Citizenship _____	
Կացության կարգավիճակը _____	
Type of Residence _____	
Տրված է _____	
Կավերական է մինչև _____	
Issued on ----- Date of expiry -----	
Ժամկետը երկարաձգված է մինչև _____	
(տիրոջ ստորագրությունը) Extended until _____	
AB 00000000	

1. Սույն քարտն ստացած օտարերկրացին ունի Հայաստանի
Հանրապետությունում բնակվելու, Հայաստանի Հանրապետություն մուտքի
և Հայաստանի Հանրապետությունից ելքի իրավունք:
The holder of this card has a right to live and to move in the
Republic of Armenia, exit and enter the Republic of Armenia:
 2. Կացության քարտը կորցնելու դեպքում օտարերկրացին անհապաղ դիմում |
է քարտը տրամադրած մարմնին:
In gase of loss of the residence card should turn immediately |
to police authorities.
 3. Կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումը ներկայացվում է |
կարգավիճակի ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:
The holder of this card should apply to update authority 30 |
days before the expiring date.
- Նշումներ
Observations

ՀԱՅԱՍՏԱՆԻ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
(Հայաստանի	
Հանրապետության	
զինանշանը)	
ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ	
REPUBLIC OF ARMENIA	
SPECIAL PASSPORT	

ՀԱՅԱՍՏԱՆԻ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
REPUBLIC OF ARMENIA	
(Հայաստանի	

Հանրապետության	
զինանշանը)	ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐ
	SPECIAL PASSPORT
	AA000000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	REPUBLIC OF ARMENIA
ԱԶԳԱՆՈՒՆԸ	
ԱՆՈՒՆԸ	ՍԵՌԸ
ՀԱՅՐԱՆՈՒՆԸ	
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ	
ԾՆՎԵԼ Է	ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՏՐՎԵԼ Է	ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ	

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT	TYPE	COUNTRY CODE	PASSPORT No
	ARM		
SURNAME(S)			
NAME			
FATHER'S NAME			
NATIONALITY			
DATE OF BIRTH	PERSONAL No		
SEX	PLACE OF BIRTH		
DATE OF ISSUE	DATE OF EXPIRY		
AUTHORITY			

4 ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS | ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS 5 |

AA0000000

6 ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS | ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS 7 |

000000AA

AA0000000

8 ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS | ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS 9 |

000000AA

AA0000000

10 ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS | ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS 11 |

000000AA

AA0000000

12 ՆՇՈՒՄՆԵՐ OBSERVATIONS

ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է:

SPECIAL PASSPORT IS THE
PROPERTY OF THE
REPUBLIC OF ARMENIA.

000000AA

ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԻՐԸ 12 ԷՋԻՑ Է: |
|SPECIAL PASSPORT CONTAINS 12 PAGES. |
